Արձանագրություն 2

Տաշիր համայնքում 2026թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
26/01/2026թ., 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,

Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,

Խաչեն Մանուկյան - «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն

Համայնքի ակտիվ բնակիչ՝

Ինեսսա Խանաղյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում իրազեկման փուլի արդյունքների ավարտի ամփոփում:

Լսեցին՝

1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց իրազեկման փուլի ընթացքում իրականացրած գործողությունները՝ արձանագրելով իրազեկման փուլի ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աստղիկ Բարոյանին՝

-ներկացայցրեց իրազեկման փուլում առաջացած խնդիրները՝ արձանագրելով ժամանակի սղության փաստը,

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլը համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել առաջարկների ներկայացման փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի հունվարի 26-ից մինչև հունվարի 31-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան